ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի, 2020 թվականի N 17-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2020 թվականի դեկտեմբերի 29-ին՝ ժամը 12 :00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

    1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տեսալսողական ծրագրերի՝ 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցերը հաստատելու մասին հարցը:
    2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության լսողական ծրագրերի՝ 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցերը հաստատելու մասին հարցը:
    3. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տեսալսողական ծրագրի՝ 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
    4. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի № 60-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը:

5. Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման կարգը սահմանելու և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի N 50-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը:
6. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձին հաստատելու և աուդիտ իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելու մասին հարցը:
7. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձին հաստատելու և աուդիտ իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելու մասին հարցը:
8. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձին հաստատելու և աուդիտ իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելու մասին հարցը:
9. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի և դրամական հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին հարցը:
10. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի և դրամական հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին հարցը:
11. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի և դրամական հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին հարցը:
12. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին հարցը:
13. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին հարցը:

14. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին հարցը:
15. Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմի 2021 թվականի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի ապրիլի 26-ի № 20-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
16. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին բաժինների համամասնությունները հաստատելու մասին հարցը:
17. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին բաժինների համամասնությունները հաստատելու մասին հարցը:
18. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին բաժինների համամասնությունները հաստատելու մասին հարցը:
19. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տեսալսողական ծրագրերի թիվը և տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալը սահմանելու մասին հարցը:
20. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տեսալսողական ծրագրերի թիվը և տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալը սահմանելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

25 դեկտեմբերի, 2020 թվական

ք. Երևան